ասոնց վերաբերմամբ տեղի ունեցած դատերու մանրամասնութեանց համար տեսնել Աստուածատուր եպս. Տէր Յովհաննէսեանի Պատմ. Երուսաղէմի երկհատոր գիրքը, և Ս. Աթոռոյ տպարանէն հրատարակուած Բովանդակութիւն ազգային սեփականութեանց խորագրով տետրակը։

2. — Յովհաննէս արքեպս. Տուեցի կամ Տայեցի Բեթղեհէմի մէջ.— Ս. Ծննդեան եկեղեցիին նկարագրութիւնը աւարտելով պարտք կը զգամ յիշատակել Դարդմանի արքեպս. Տայեցիին Բեթղեհէմի եկեղեցւոյն այցելութիւնը, քաղելով Վարդան վրդ. Բարձրբերդցիին Տիեզերական Պատմութեան գրքէն (էջ 201–204). սոյն արքեպիսկոպոսը՝ ճգնասուն եկեղեցական մը՝ (✻ 1263) բոկոտն ուխտի կու գայ Երուսաղէմ, և Ս. Յարութեան տաճարին մէջ երեք յիսնակներ կը մնայ անհաց և անջուր, յոտին կեցած և լուռ. իր վարքովը կը զարմացնէ ֆռանկները և կը տարածուի անոր համբաւը իբր հրաշագործ։ Ս. Յարութեան տաճարին մէջ Դարդմանի արքեպիսկոպոսին Ս. Դերեզմանին վրայ կատարած հրաշալի լուսավառութեան առթիւ Բարձրբերդցիին պատմուածքը զանց ընելով՝ բառ առ բառ աշխարհաբարի կը վերածեմ միայն Նոյն եպիսկոպոսին Բեթղեհէմի ուխտաւորութեան ժամանակ տեղի ունեցած պատմական մէկ դրուագը զոր կը յիշատակէ դարձեալ Բարձրբերդցին։ . . . . . «Երբ Ս. Բեթղեհէմ գացի եւ տեսայ որ Սուրբ Առուաքեղոց պատկերները հոն՝ եկեղեցիին պարիսպին վրայ նկարուած էին, եւ թշնամիները անարգութեան պատճառով անոնց աչքերը փորած էին, շատ տրտմեցայ, եւ աղօթեցի Ս. Առաքելոց եւ աղաչեցի որ ինձ յայտնեն թէ իրենց հաճո՞յ է ասոնց տեղ իրենց պատկերը նկարել։ Եւ երբ Երուսաղէմ դարձայ, նոյն գիշերը տեսիլքի մը մէջ տեսայ երկու փառաւոր մարդեր՝ որ ինծի կու գային եւ ես անոնց առջեւը ելնելով ըսի թէ՝ ո՞վ էք դուք, Աստուծոյ սուրբեր, եւ անոնք ալ կ'ըսեն. Պետրոս եւ Յովհաննէս, դու գիր որ մեզի աղաչեցիր՝ որպէս զի քրիստոնեաներուն՝ մեզի ձեւակերպելու կամ նկարելու մասին մեր կամքը յայտնենք. այդ բանը բնաւ մեզի հաճոյ չէ. ձանձրացած ենք եւ տեղ տեղ ալ կը յայտնենք, բայց մտիկ չեն ըներ մեզի։

1169 թուականին էր որ, ինչպէս տեսանք վերև, Յոյնք և Լատինք համաձայնելով Ս. Ծննդեան եկեղեցիին պատերը և պարիսպները զարդարեցին նկարներու և մոզայիքներու անօրինակ ճոխութեամբ մը, ինչպէս պարզեցինք, թէ ուխտաւորք